

ՄՈԿՍԻ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԳՐԱԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ)

DOI: 10.52971/3045-3038-2024.2-148

Հասմիկ Մատիկյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Շիրակի պետական համալսարան

Ամփոփում

Վանի նահանգի Մոկս գավառակն ունի հարուստ բանահյուսական ժառանգություն՝ վիպական, քնարական բանահյուսություն: Մոկս գավառն առանձնանում էր իր ուրույն կենցաղով, ծիսական նկարագրով: Մոկսի բանավոր ավանդությանն անդրադարձել են Գարեգին Սրվանձտյանցը, Հովսեփ Օրբելին և այլն:

Ուսումնասիրության տիրույթում են լինելու *Խարսի յէրք*, *Փէսի կովք*, երգատեսակները: Նշված երգերը հատկորոշվում են կայուն բանաձևերով, լեզվառճական առանձնահատկություններով, խրատի ու գովքի համեմունքով: Անդրադառնալու ենք Մոկսի հարսանեկան երգերին, որոնք բանահյուսական են:

Բանալի բառեր՝ *հարսանիք, երգ, Մոկս, բանահյուսություն, տեքստ, բանաձև, գովք:*

THE CHARACTERISTICS OF MOKS WEDDING SONGS (IN THE CONTEXT OF HOVSEP ORBELI'S FOLK MATERIAL)

Hasmik Matikyan

NAS Shirak Center for Armenological Studies

Shirak State University

Abstract

The Moks region, located in the province of Van, possesses a rich and diverse folklore tradition, encompassing both epic and lyrical forms of folklore. This province is renowned for its distinctive cultural practices, particularly in relation to its rituals and lifestyle. Notable scholars such as Garegin Srvandztyants and Hovsep Orbeli have extensively examined the oral traditions of Moks, contributing significantly to the preservation and understanding of its folklore.

Our study will focus on three key wedding songs: *Kharsi yerk*, *Pesi kovk*. These song forms are characterized by their use of stable formulas, specific linguistic and stylistic features. The primary focus of the analysis will be on Moks wedding songs, which represent an important aspect of the region's folklore.

Keywords: wedding, song, Moks, folklore, text, formula, praise.

ХАРАКТЕРИСТИКА СВАДЕБНЫХ ПЕСЕН МОКСА (НА ОСНОВЕ ЗАМЕТОК ОЕРА ОРБЕЛИ)

Асмик Матикян

Ширакский центр арменоведческих исследований НАН
Ширакский государственный университет им. М.Налбандяна

Аннотация

Регион Мокс, расположенный в провинции Ван, обладает богатым и разнообразным фольклорным наследием, включающим как эпические, так и лирические формы устного творчества. Этот регион известен своими уникальными культурными практиками, особенно в отношении обрядов и образа жизни. Знаменитые ученые, такие как Гарегин Сrvандзтянц и Осеп Орбели, широко исследовали устные традиции Мокса, внесли значительный вклад в сохранение и понимание его фольклора.

В данном исследовании будет сделан акцент на трех ключевых жанрах песен: *Харси ерк*, *Песи ковк*. Эти песенные формы характеризуются использованием устойчивых формул, специфических языковых и стилистических особенностей, а также значительным акцентом на наставления и восхваление. Основное внимание в исследовании будет уделено свадебным песням Мокса, которые представляют собой важный аспект фольклора региона.

Ключевые слова: *свадьба, песня, Мокс, фольклор, текст, формула, восхваление.*

Նախաբան.

Հարսանեկան երգերը, լինելով ծիսական բանահյուսության կարևոր երգատեսակներ, արտացոլում են յուրաքանչյուր տարածա-

շրջանի ազգագրական-բանահյուսական պատկերը: Յուրաքանչյուր պատմազգագրական շրջան ունի հարսանեկան երգի իր բանահյուսական նմուշը, թեպետ ընդհանուր առմամբ հարսանեկան երգը գովքի տեքստ է՝ ասույթաբանական առատ միավորներով, դարձվածքներով:

Մոկսի բանահյուսական ժառանգությանը, մասնավորապես հարսանեկան երգերին անդրադարձել է անվանի հայագետ, բանասեր Հովսեփ Օրբելին:

Գ. Մկրտչյանը *Էջեր Օրբելիների ընտանիքի կյանիքից*¹ գրքում գրում է. «Հովսեփ Օրբելուն կարելի է դասել առավել հանճարեղ այն գիտնականների շարքին, որ տվել է հայ ժողովուրդը աշխարհին»:

Հ. Օրբելուն հաջողվել է գրառել 3 հարսանեկան երգ²:

Ուշագրավ օրինակ է հետևյալը.

Ա՛խ, մարե, զիս խապիցին,
Ախ, մարե, զիս խապիցին,
Զիս խապիցին, խապլապիցին,
Կարմիր սօլիւր ձի խակուցին,
Ա՛խ, մարե, զիս խապիցին:

Տեքստը ռիթմիկ միավորների համաձուլվածք է. երգը սկսվում է *ա՛խ* զգացական ձայնարկությունով: Սրընթաց գործողությունները տեքստային տիրությունում իրականացնում են բայերը:

¹ Մկրտչյան Գ., *Էջեր Օրբելիների ընտանիքի կյանիքից, Օրբելի եղբայրների տուն-թանգարան, Երևան, 2012*:

² Օրбели И. А., *Избранные труды, том 2, (Составитель и редактор том П.М.Мурадян), Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 2002*.

Կարմիր սուլեր /կոշիկներ/ արտահայտությունը օգտագործվում է նաև ժողովրդական այլ երգերում, մասնավորապես՝ Յար ջան դու բարով եկար// կարմիր սուլերով եկար//կանաչ սարերով եկար: Լայն կիրառություն ունեն նաև սուլերը շիտկել, էրկու ոտքը մեկ սուլ դնել – համառել պատկերավոր արտահայտությունները:

Կարմիր սուլեր-ը ժողովրդական երգերում հաճախադեպ է.

Բերեմ քեզի կարմիր սուլեր,

Քեզի բերեմ շորեր խաս,

Որ դու հագնես էրթանք չուլեր,

Ինձի մի հատ պաչըմ տաս:

Տեքստում կարմիր գույնը գերակա է հագուստի համար՝ կարմիր սուլի, կարմիր ֆրստան, կարմիր մետակ.

Կարմիր մաիդակ հերեսին,

Խա էդնակ էր, խա լուսնակ էր,

Խազար էնեկ քու փեսեն,

Խա էդնակ էր, խա լուսնակ էր:

Խապիցին բառային միավորը՝ որպես առանցքային կրկնակ, գերակա է Մոկսի հարսանեկան երգերում: Երգը առանձնանում է *խապիցին* գործողության թվարկմամբ. յուրաքանչյուր տող ավարտվում է բայով.

Հուշիկ-հուշիկ ձի քելցուցին,

Չուր վար կեսրանց տուռ կայնացցին...

(Ընդգումները մերն են):

Մոկսի հայոց հարսանյաց պարերգում նույնպես *խաքեցին* բայը առանձնանում է.

Մեր խաքեցինք սալու լաչով,

Խեր խաբեցինք թոփ մի շալով...¹

Նշված պարերգի տեքստում նկարագրվում է հարսանիքի կատարման ընթացքը, կարևորվում է ծեսը: Օրհնանք-մաղթանքը դառնում է պարերգի փակող տող-բանաձև.

Զարկեք խաղցեք, կրնկտիք, տրդերք,
Քաղցր ու բաղարջ, խունկ, մոմ խանեք,
Տերտեր կանչեք, գա բուրվառով,
Պըսակն օրհնե Ավետըրնով:
-Աստված բարի վայելում տա՛:
-Աստված մեկ բարձի ծերացուցե՛:

Մոկսի *Հարսի գովք* երգում նշվում է թախտը՝ որպես կարևոր բաղադրատարր.

Խարս, արե վեր քյո թախտեն,
Գյանգատ մ'աներ քյո բախտեն:
Խարս արե վեր, նազ մ'աներ,
Զյուպեն տուր վեր, թոզ մ'աներ...

Թախտ բառամիավորով հարուստ է հայոց դարձվածքային մտածողությունը: Այսպես՝ *թախտի վերին ծայրին նստեցնել-մեծ պատվի, հարգանքի արժանացնել, թախտից տանի- անեծք/ մեկի հարսը չբախտավորվի*²:

Շիրակում կենցաղավարում են հետևյալ արտահայտությունները՝ *Թախտից փախնիս, բախտիցդ ու՛ր փախնիս* կամ *Մոր թախտ, աղջկա բախտ*:

¹ Մոկս. *հայոց բանահյուսական մշակույթը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Եր.*, Գիտություն, 2015, էջ 433-434:

² Բեդիրյան Պ., *Հայերեն դարձվածքների բառարան, Երևանի պետական համալսարանի հրատ.*, Երևան, 2011:

Բաֆֆու ստեղծագործություններից մեկում *թախտ-բախտ* բառերի փոփոխակն է ընդգծվում.

Ինձանից հեռու կփախչիս անգու՛թ բախտ,

Դու կսիրես զգվել հարուստների թախտ...¹

Թախտ բառը ունի նաև *գահ* իմաստը. հարսանիքի տան դահլիճի մի անկյունում հատակից բավականին բարձր կապած է թախտը, որի վրա նստած է լինում թագավորը (փեսան) (Բաֆֆի):

Մոկաց հարսանեկան երգում *թախտից իջնել*-ը կարելի է մեկնել այսպես՝ հարմարվել նոր կյանիքին, նոր միջավայրին:

Սվետլանա Վարդանյանը *Հովսեփ Օրբելին՝ քանագետ-քանահավաք* հոդվածում ներկայացնում է Օրբելու քանագիտական գործունեությունը, նշելով՝ «Հովսեփ Օրբելու գիտական տարաբնույթ գործունեության մեջ առանձնանում է՝ հայ քանագիտության բնագավառում իրականացրած նրա անուրանալի վաստակը: Նա Մոկսի բանահյուսական ժառանգության առաջին գրառողներից է: Գրառումները նա իրականացրել է Մոկսում, դաշտային գործուղումների ընթացքում, որն էլ առավելագույնս արժեւորել եւ արժեւորում է նրա գրառած նյութերի սկզբնաղբյուրային կարեւորությունը: Մեկնելով տարածաշրջան՝ Հ. Օրբելին նախընտրեց Մոկսի գավառը: Ի սկզբանե, նա իր առջեւ խնդիր էր դրել՝ տիրապետել տեղավայրի լեզվաբարբառային յուրահատկություններին, քերականական կառուցվածքին: Աշխատանքները նա իրականացրել է բարբառային բառերի, բանահյուսական բնագրերի գրանցման եւ տեղաբնիկների հետ ունեցած ամենօրյա զրույցների ընթացքում²:

¹ Բաֆֆի, *Երկերի ժողովածու*, հատոր 1, 1962, էջ 222:

² <https://arar.sci.am/dlibra/publication/277151/edition/254271/content>

Մոկսի հարսանեկան երգերն ունեն լացերգին բնորոշ տարրեր. նոր կյանք մտնելուց առաջ հարսները լացի երգ են կապում հայրական տնից բաժանվելու ժամանակ:

Հարսը երգի մեջ հրաժեշտի ողջունով արտահայտում է հուզմունքը, ծնողներից բաժանվելու մորմոքը:

Մոկսի հարսանեկան ծեսի նկարագրությունը լավագույնս է արտահայտվում հետևյալ երգում.

Տարան ժամտան տուռ կայնացցին,

Ձի մանչ ժամտան մըտըցուցին...

Աչ տոտ պարին ձի քելցուցին...

Դաստէմ խաց վար կլխուս շարիցին,

Լուպըմ ցորէն ցանիցին...

Հիշյալ հարսանեկան երգում ցորենը խորհրդաբեր է, ցորենի շաղ տալը կապվում է նաև առատության հետ, տղաբերքի հետ:

Մուշ քաղաքում մանկան օրորոցից ցորեն էին կախում: Փոքրիկ քսակի մեջ *մի բուռ ցորեն* են լցնում և կախում նորածնի օրորոցից: Մայրը օրորում է երեխային և ասում.

-Տանդ միշտ ցորեն լինի: Թող կյանքդ ու արտդ երաշտ չտեսնեն: Հոգիդ մաքուր մնա մինչև խոր ծերություն և մարդիկ սիրեն քեզ արդար ցորենի պես:¹

Հ. Խաչատրյանի *Հացապատում* գրքում նշվում է, որ Վասպուրականում հարսանիքից առաջ հարսին տանում էին Սուրբ Խաչ եկեղեցի. տաճարի մոտ նրան մի լավաշ էին տալիս՝ համոզված լինելով, որ հարսը լույս աշխարհ կբերի գեղեցիկ երեխաներ²:

¹ Խաչատրյան Հ., *Հացապատում*, *Հայաստան հրատ.*, Եր., 1984:

² Նույն տեղում, էջ՝ 73:

Մոկսի բանահյուսական ժառանգությունը հարուստ է տեղավայրերի հիշատակումներով՝ բացառիկ վերաբերմունք ցուցաբերելով եկեղեցիների, տաճարների նկատմամբ:

Աղթամարա դեմ կայնիր իս,
Կանաչ-կարմիր կապիր իս,
Բարով քու թագիկ վայիլիս,
Աստված քի թըղներ պարզիրիս...

/Փեսայի թագի գովք/¹

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մոկսի ավանդական հարսանեկան երգերն ունեն ուրույն նկարագիր՝ հարսանեկան ծեսի պատկերմամբ: Հ. Օրբելու գրառած հարսանեկան երգերը ոչ միայն պատմական այս կարևոր շրջանի բանահյուսական ժառանգության վկան են, այլ նոր հիմք են հանդիսանում բացահայտելու Մոկսի ծիսական մշակույթը ազգագրություն-բանահյուսություն աղերսով:

Օգտագործված գրականություն

1. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների բառարան, Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան, 2011:
2. Խաչատրյան Հ., Հացապատում, Հայաստանի հրատ., Եր., 1984:
3. Մկրտչյան Գ., Էջեր Օրբելիների ընտանիքի կյանքից, Օրբելի եղբայրների տուն-թանգարան, Երևան, 2012:
4. Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Եր., Գիտություն, 2015:
5. Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, Հայպետհրատ., 1962, 585 էջ:
6. Орбели И. А., Избранные труды, том 2, (Составитель и редактор тома П.М.Мурадян), Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 2002, 456 с.

¹ Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Եր., Գիտություն, 2015, էջ 432: